Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 01.12.2021թ.

Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
նախագահությամբ՝ Կ.Մարդանյանի
մասնակցությամբ անդամներ՝ Գ.Մարգարյանի
Վ.Տեր-Գևորգյանի

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) քննության առնելով քրեական մասնագիտացման բաժնի մինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության գործեր և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների թեկնածուների ցուցակի արտահերթ համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հավակնորդի կողմից բողոքարկվել են քրեական իրավունք բաժնի 5-րդ, 7-րդ և 8-րդ հարցերը:

Հարց 5

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից 1-ինը, այն է՝ *այո*, <Դ-ն ենթակա է քրեական պատասխանատվության>, մինչդեռ ներկայացվածներից ճիշտ տարբերակը 3-րդն է, այն է՝ *Դ-ն ենթակա է քրեական պատասխանատվության միայն 2003 թվականից մինչև 2018 թվականը կատարած արարքի համար, քանի որ նշված արարքը քրեական օրենսգրքով նախատեսվել է 2003 թվականին:* Հանձնաժողովը գտնում է, որ թեստային առաջադրանքը կազմված է ճիշտ, ներկայացված չորս տարբերակներից միայն պատասխան գ-ն է որոշակիության սկզբունքից ելնելով համարվում ճիշտ, այլ ոչ թե պատասխան ա-ն: Գտնում ենք, որ <ա> և <գ> տարբերակները հարաբերվում են որպես ընդհանուրը և մասնավորն, որի պարագայում մասնավորն ավելի որոշակի է տալիս հարցի պատասխանը:

Հարց 7

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան է ընտրել առաջադրվածներից 2-րդը, այն է՝ *ոչ, քանի որ գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում*, սակայն ճիշտ պատասխանն է 3-րդը՝ *ոչ, քանի որ գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում*: Գտնում ենք, որ բողոքում բերված դիրքորոշումը սխալ է, քանի որ առաջադրանքից հստակ բխում են հետևյալ հանգամանքները"

1-ին՝ Մ-ն ենթարկվել է ոտնձգության, 2-րդ՝ ոտնձգությունը եղել է իրական և առկա, 3-րդ՝ Մ-ն վնասը պատճառել է իր դեմ ոտնձգություն կատարող անձի գույքին: Մինչդեռ, ծայրահեղ անհրաժեշտության դեպքում առկա է լինում վտանգ, այլ ոչ թե ոտնձգություն, և վնասը հասցվում է երրորդ անձանց:

Հարց 8

Հավակնորդը որպես ճիշտ պատասխան նշել է առաջադրվածներից 2-րդը, այն է՝ *պատրաստի ակտ կայացնելու պահին գործող օրենքով*, մինչդեռ ճիշտ պատասխանն է 3-րդը, այն է՝ *հանցավոր արարքն ավարտվելու պահին գործող օրենքով, քանի որ հետագայում կատարված փոփոխությամբ Գ-ի վիճակը, որևէ կերպ չի բարելավվել:*

Հանձնաժողովը գտնում է, որ հավակնորդը անտեսել է այն հանգամանքը, որ նոր օրենքը հետադարձ ուժ կարող է ունենալ միայն այն դեպքում, երբ այն, որևէ կերպ բարելավվում է անձի վիճակը: Նշված հարցը հստակ կարգավորված է ՀՀ քրեական օրենսգրքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 105.1-րդ հոդվածով, ինչպես նաև Բարձրագույն դատական խորհրդի՝ 2021 թվականի հուլիսի 15-ի թիվ ԲԴԽ-50-Ո-119 որոշմամբ հաստատված թիվ 4 հավելվածի 29-րդ կետով Բողոքարկման հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ 2317 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը՝ մերժել:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Կ.ՄԱՐԴԱՆՅԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ Գ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ա.ՏԵՐ-ԳԵՎՈՐԳՅԱՆ